ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2024թ.

Բովանդակություն

1	2023-2024թթ. ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ	3
2	Քոլեջի առարկայական հանձնաժողովների իրականացրած աշխատանքների և դասալսումների վերաբերյալ	7
3	2023-2024թթ. ուս տարվա առաջին կիսամյակի պրակտիկաների վերաբերյալ	9
4	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների վերլուծություն	10
5	Քոլեջի ստորաբաժանումների իրականացրած աշախատանքների վերաբերյալ 1.Ուսումնական մասի կատարած աշխատանքների վերաբերյալ	11
6	2.Գրադարանի 2023-2024թթ. ուս տարվա I կիսամյակում իրականացրած աշխատանքերի վերաբերյալ:	14
7	3. 2023-2024թթ. ուս տարվա I կիսամյակում կազմակերպված միջոցառումների վերաբերյալ	14
8	4. Դասախոսների ներքին և արտաքին հոսունության տվյալների վերլուծություն	15
9	5.Ռազմավարական ծրագրում նշված աշխատանքների վերաբերյալ	16
10	6. Կրթության որակի ապահովման բաժնի աշխատանքների վերաբերյալ	16
11	2023թ. առաջին կիսամյակի Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման վերաբերյալ	18
12	**Եզրակացություն**	19

2023-2024թթ. ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ

Քոլեջում 2023-2024 ուս. տարվա ընդունելության տեղերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության 28.07.2023թ. N01/10.1/1958-23 գրության ըստ մասնագիտությունների սահմանվել է 140 տեղ՝ 106/34 պ/պ և վճարովի հիմունքներով հարաբերությամբ:

Նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության 28.07.2023թ. N01/10.1/1959-23 գրության հատկացվել է 20 տեղ՝13/7 պ/պ և վճարովի հիմունքներով հարաբերությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրով (փորձարարական կարգով ներդրված) ընդունելություն իրականացնելու համար: Ընդունելության դիմումները ներկայացվել են հիմնական ընդհանուր կրթության հիմքով 5 մասնագիտություններով:

2023-2024թթ.ուս.տարվա ընդունելության արդյունքում քոլեջ ընդունվել է 99 սովորող: Ընդունելության ժամանակ սովորողները լրացրել են Կարիերայի պատասխանատուի կողմից մշակված « Դիմորդի հարցաշարը»: Հարցմանը մասնակցել են դիմորդների 97%-ը (96 սովորող):

Դիմորդի հարցաշարի վերլուծությունից պարզ դարձավ, որ Աբովյանի պետական էներգետիկական քոլեջն ընտրել են 6%-ը՝ բնակավայրին մոտ լինելու պատճառով, 9%-ը՝ ուսումը շարունակելու նպատակով, 25%-ը՝ ծնողի, բարեկամի կամ ծանոթի խորհրդով, 11.4%-ը՝ Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը առավել են դասել տարածաշրջանի այլ քոլեջներից, 3%-ը՝ ԲՈՒՀ-ում ուումը շարունակելու նպատակով, 15.6%-ը՝ ընտրել են քոլեջը, քանի որ իրենց նախընտրած մասնագիտություն առկա է քոլեջում, 3%-ը՝ չեն ցանկացել ուսումը շարունակել ավագ դպրոցում, 16%-ը՝ չեն պատասխանել նշված հարցին, 11%-ը՝ տվել են տարբեր պատասխաներ:



Այն հարցին, թե դիմորդները որտեղից են տեղեկացվել քոլեջի մասին պատասխանել են հետևյալ կերպ. 18.7%-ը տեղեկացել է քոլեջի կողմից դպրոցում իրականացված շրջայցի միջոցով, 78.1%-ը՝ շրջապատող անձանց միջոցով, 3.1%-ը՝ այլ միջոցով է տեղեկացվել:

Որտեղի՞ց են տեղեկացել քոլեջի մասին



Այն հարցին, թե մասնագիտական խորհրդատվություն և կողմնորոշում որտեղ են ստացել, պարզ դարձավ՝5.2%-ը ստացել է դպրոցում, 9.3%-ը՝ քոլեջում (Կարիերայի կենտրոնի և ընդունող հանձնաժողովի կողմից), 36.4%-ը՝ ծնողի խորհրդով, իսկ 49.1.%-ը՝ ինքնուրույն է որոշում կայացրել:

Մասնագիտական խորհրդատվություն և կողմնորոշում որտեղ են ստացել



Մասնագիտության ընտրության հարցում դիմորդների 57.8%-ը որոշում է կայացրել իրքնուրույն, 26%-ը ընտրել է ծնողի խորհրդով, 10%-ը՝ որոշել է քոլեջում ստացած խորհրդատվության արդյունքում, 6.2%-ի որոշման վրա ազդել են իրեն շրջապատող անձիք:

Մասնագիտության ընտրության հարցում դիմորդը որոշում է կայացրել



Այն հարցին, թե որքանով են համարում բավարար քոլեջում իրականացված խորհրդատվությունը մասնագիտական կողմորոշման հարցում, դիմորդների պատասխանը եղել է հետևյալը.

Կարիերայի ուղղորդման պատասխանատուի աշխատանքի գնահատում



Քոլեջի առարկայական հանձնաժողովների իրականացրած աշխատանքների և դասալսումների վերաբերյալ

Առարկայական հանձնաժողովները իրենց աշխատանքները իրականացնում են «ԱՊԷՔ-ի առարկայական հանձնաժողովների գործունեության կանոնակարգին » համապատասխան: Հանձնաժողովի կազմում ընդգրկված բոլոր դասախոսները ունեն համապատասխան որակավորում, գիտելիքներ և հմտություն:

Կիսամյակի ընթացքում կազմվել և հաստատվել են նաև թեմատիկ պլաններ և դասալսումների գրաֆիկ: Քննարկվել են նաև այս տարվա առաջին կիսամյակի ուսումնական պրակտիկաների արդյունավետ անցկացման հարցեր, որոնք անցկացվել են ըստ գրաֆիկի:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են նոր դասախոսներ: Նրանց ԱՊԷՔ-ում գործող « Սկսնակ դասախոսների մենթորության քաղաքականության » համաձայն կցվել են մենթորներ, որոնց օնությամբ նոր դասախոսները կարողացել են հեշտությամբ ինտեգրվել աշխատանքներին:

Քոլեջում դասալսումներն իրականացվում են ըստ դասալսումների կարգի, նախապես հաստատված գրաֆիկով, յուրաքանչյուր առարկայական հանձնաժողովի (այսուհետ՝ ցիկլ) կողմից: Յուրաքանչյուր ցիկլի նախագահի նախաձեռնությամբ է որոշվում իր ցիկլում իրականացվող տարեկան դասալսումների քանակը: Էներգետիկ ցիկլում ընդգրկված յուրաքանչյուր դասախոսի մոտ իրականացվում է դասալսում՝ կիսամյակը մեկ անգամ:

Որևէ դասախոսի մոտ խնդիրներ առաջանալու դեպքում իրականացվում է ոչ պլանային դասալսում:

Ըստ ներկայացված դասալսումների վերլուծությունների պարզ դարձավ, որ 2023-2024թթ. ուս. տարվա առաջին կիսամյակում քոլեջում իրականացվել է 26 դասալսում:

Դասալսումների ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման մեթոդիկային, ուսումնառության նյութերին, գնահատման թերթիկներին և դիդակտիկ նյութերի առկայությանը:

Դասալսումների ընթացքում թերությունները արձանագրվել են տվյալ դասալսումը իրականացնող ցիկլի նախագահի կողմից, այնուհետև քննարկվել է ցիկլի կողմից հրավիրված ժողովներին՝ ցիկլի բոլոր անդամների մասնակցությամբ:

Քոլեջում առկա հինգ ցիկլերի իրականացրած դասալսումների ընթացքում նշված թերությունները հետևյալն են՝

- որոշ դասախոսների չափից ավելի խիստ լինելը թե՛ գնահատման, և թե՛ դասապրոցեսի անցկացման առումով
- որոշ դասախոսների մոտ խստության պակասը
- նոր դասախոսների մոտ դասավանդման նյութերի ծավալուն լինելը
- ուսանողների պասիվությունը(խուսափում են ակտիվություն ցուցաբերել)
- դիդակտիկ նյութերի պակասը:

Դասալսումների ընթացքում, բացի վերոնշյալ թերություններից արձանագրվել են նաև մի շարք առավելություններ, դրանք հետևյալ են՝

- գնահատման օբեկտիվությունը
- ինտերակտիվ մեթոդների կիրառում
- սլայդ դասերի անցկացում

Դասալսումներից բացի իրականացվել են նաև բաց դասեր, Էկոլոգիային վերաբերող դասընթացներ:

2023-2024թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի պրակտիկաների վերաբերյալ

ԱՊԷՔ-ի 2023-2024թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի ուսումնաարտադրական պրակտիկաների վերաբերյալ:

2023-2024թթ. ուստարվա 1-ին կիսամյակում, ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի, ուսումնաարտադրական պրակտիկաներ են ունեցել « Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ «ՀՀ-21», «ՀՀ-11» խմբերը, "Էլեկտրամատակարարում" մասնագիտությամբ «ԷԼՄ-11»,«ԷԼՄ-21»,«ԷԼՄ-01» խմբերը, «Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում» մասնագիտությամբ «ԷԳՄ-11» խումբը, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ «ԷՀՄ-21» և «ԷՀՄ-11» խմբերը, «Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ" մասնագիտությամբ «ՋՄ-ՋՍ-21» և «ՋՄ-ՋՍ-11» խմբերը, «Ջերմաէլեկտրակայաններ» մասնագիտությամբ «ՋԷԿ-01» խումբը:

Նշված ուսումնաարտադրական պրակտիկաներից առանց տեսական ուսուցման արտադրական պրակտիկաներ են ունեցել «ԷԼՄ-11», «ԷՀՄ-11», «ՋԷԿ-01» խմբերը, որոնցից «ԷԼՄ-11» խումբը իր առանց տեսական ուսուցման արտադրական պրակտիկան անցկացրել է «Հայէլցանց» ՓԲԸ Աբովյանի «Գեղամա» մասնաճյուղում, «ԷՀՄ-11» խումբը՝ ԱՊԷՔ-ի «Ինֆորմատիկայի և ՀՏ» լաբորատորիայում, իսկ «ՋԷԿ-01» խումբը իր և՛ առանց տեսական ուսուցման, և՛ նախաավարտակ անարտադրական պրակտիկաներն անցկացրել է «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ-ում:

Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունների վերլուծություն

2023թ. մայիսի 12 -ին կայացել է կառավարման խորհրդի հերթական նիստը, օրակարգային հարցերից է եղել նոր խորհրդի անդամի ներկայացումը: Նիստում որոշվեց խորհրդի անդամ Կարեն Գուլոյանի փոխարեն խորհրդի նիստերին ընդգրկել Մարտիկ Սաֆարյանին:

Կառավարման խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 22-ին: Նիստում քննարկվել են ընթացիկ հարցեր՝ սովորողների ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման, 2023-2024 թթ ուս. տարվա I կիսամյանկի կրթաթոշակ ստացողների անվանական կազմը, ըստ համակարգերի միջև մասնագիտական, նախնական մասնագիտական և հեռակա ուսուցման կրթական ծրագրերի տարիֆային ցուցակները և բացակայությունների թույլատրելի շեմի փոփոխությունը: Բացակայությունների թույլատրելի շեմը նախկին 140 ժամից դարձել է 200 ժամ:

2023թ. նոյեմբերի 16-ին կայացել է խորհրդի արտահերթ նիստ՝ կապված 2023թ. նախահաշվի փոփոխության հետ:

Ըստ կառավարման խորհրդի արձանագրությունների հաջորդ նիստը տեղի է ունեցել 2023թ. դեկտեմբերի 19-ին: Նիստում քննարկվել են աշխատողների խրախուսմանն ուղղված հարցեր: Բոլոր աշխատողները խրախուսվել են:

2024թ. հունվարի 10-ին կայացել է հերթական արտահերթ նիստը՝ կապված նախահաշվի հետ:

Քոլեջի ստորաբաժանումների իրականացրած աշխատանքների վերաբերյալ

1. Ուսումնական մասի կատարած աշխատանքների վերաբերյալ

Ուսամնական մասի կողմից վերանայվել է դասալսումների կարգը: 2021-2023թթ.ԱՊԷՔ -ի «Հանրակրթական առարկայական հանձնաժողով»-ի կողմից քննարկվել և փոխվել է «Ճարտագիտական հոգեբանություն» առարկայի ծրագիրը:

ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից 2022թ.-ին վերանայվել է «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության, «Հաշվապահ» որակավորման պետական կրթական չափորոշիչը: Հաշվի առնելով վերոնշված փոփոխությունները՝ 2023թ.-ի ուստարվա ǁ կիսամյակում, ուսումնական մասի կողմից մշակվել է «Տնտեսաիրավագիտական ցիկլ»-ի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսումնական պլանը և մոդուլային ծրագրերը: Վերանայված ուս.պլանով և ծրագրերով դասավանդումը կտարածվի 2023թ.ընդունված ուսանողների վրա՝ 2024-2025 ուս.տարում:

Կապված ժամաքանակների փոփոխման հետ վերանայվել, մշակվել և հաստատվել են

1 Հաղորդակցություն

2 Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ

3 Անվտանգության և առաջին օգնության

4 Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակի հիմնահարցեր մոդուլների և առարկաների ծրագրերը և դրվել գործածության մեջ:

Մշակվել են և հաստատվել նաև փոփոխված ուս. պլանով նախատեսված նոր մոդուլների ծրագրերը՝

- Տվյալների մշակման վիճակագրական մեթոդներ
- Կառավարման հմտություններ
- Ֆինանսական մաթեմատիկա
- Ֆինանսներ և վարկ

Ընթացիկ տարում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից վերանայվել են նաև «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում » և «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում ու շահագործում » մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները, որոնք կտարածվեն 2023թ. ընդունվածների վրա:

Պետական կրթական չափորոշիչները վերանայվել են, կազմվել նոր ուսումնական պլաններ, հաստատվել են քոլեջի կողմից և պատրաստ են ուսումը կազմակերպելու համար:

Կապված նշված մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների վերանայման հետ, նոր մոդուլներ են ընդգրկվել ուսումնական պրոցեսում, փոփոխվել են դրանց հատկացված ժամաքանակները: Աշխատանքները կապված նշված փոփոխությունները կատարելու առարկայական և մոդուլային ծրագրերի վերանայման և պատրաստման հետ, գտնվում են ընթացիկ գործընթացի մեջ և սեղմ ժամկետներում կլինեն պատրաստ:

Ուսումնական մասի կողմից իրականացվում է սովորողների շարժի, առաջադիմության, հաճախելիության օպերատիվ հետազոտություն վերլուծություն:

Կապված ընդունելության հետ նոր ուսումնական տարվա սկզբից քոլեջը ունի 21 խումբ՝ 18 ՄՄԿ և 3 ՆՄԿ համակարգերում:

2023-2024թթ. հունվար ամսվա դրությամբ սովորողների թիվը 349 է, որից 308 սովորում են միջին մասնագիտական կրթական և 41՝ նախնական մասնագիտական կրթական համակարգերում:

Ուսումնական մասի կողմից իրականցվել է քոլեջի սովորողների առաջադիմության վերլուծություն, ըստ որի 39 գեազանց և 118 հարվածային սովորող: Ուսման առաջադիմությունը կազմել է 99.2%, ընդհանուր որակական առաջադիմությունը գերազանց և հարվածային սովորողների կազմել է 11.1%/ 33.8% տոկոսային հարաբերակցությամբ:

Համեմատելով 2022-2023թթ. և 2023-2024թթ. սովորողների որակական առաջադիմության ցուցանիշները, պարզ դարձավ, որ այն բարձրացել է:

Ստորև ներկայացված է համապատասխան աղյուսակը:

Քոլեջի ուսանողների առաջադիմությունը 2023-2024թթ. ուս. տարվա 2-րդ կիսամյակում

	Խմբերը	Սովորող-ների թիվը	Անբավարա-ների և չներ-կայացածնե-րի թիվը	Ուսման առաջադի-մությունը %-ներով	Գերազանցիկները և հարվածայինները		Ծանո-թություն
					Մարդ	Որակական առաջադիմություն	
1	ՀՀ -31	5^{15}		100	-/6	-/30	
2	ԷԼՄ-31	18		100	-/7	-/38.9	
3	ԷՀՄ-31	15^{6}		100	1/13	4,8/61,9	
4	ԳՍՀ-31	20		100	-/3	-/15	
5	ՀՀ-21	7^{13}		100	5/10	25/50	
6	ԷԼՄ-21	18		100	-/7	-/38,9	
7	ԷԳՄ-21	18	1	94,4	1/3	5,2/15,7	
8	ԷՀՄ-21	17		100	4/12	23,5/70,6	
9	ՋՄևՋՍ-21	10		100	2/3	20/30	
10	ԳՍՀ-21	14		100	-/6	-/42,8	
11	ՀՀ-11	10^{5}		100	5/3	33,3/20	
12	ԷԼՄ-11	17	1	94,1	6/2	33,2/11,1	
13	ԷԳՄ-11	13		100	2/3	15,4/23,1	
14	ԷՀՄ-11	20		100	3/9	15/45	
15	ՋՄ և ՋՍ-11	14		100	2/2	14,3/14,3	
16	ԷԼՄ-01	21	1	95,2	1/1	4,5/4,5	
17	ԷՀՄ-01	21		100	5/8	23,8/38,1	
18	ՋԷԿ-01	11		100	2/4	18,2/36,4	
	Ընդամենը	**269^{39}**	**3**	**99,9**	**39/102**	**12,6/33,1**	
19	ՎԷԿՄևՍ-31	18		100	-/8	-/44,4	
20	ՎԷԿՄևՍ-21	12		100	-/6	-/50	
21	ՎԷԿՄևՍ-11	11		100	-/2	-/18,2	
	Ընդամենը	**41**	**-**	**100**	**-/16**	**-/39,02**	
	Ընդամենը ըստ քոլեջի	**349**	**3**	**99,2**	**39/118**	**11,1/33,8**	
Ընդամենը ըստ քոլեջի		պ/պ 269	Վճարովի 39				

2.Գրադարանի 2023թ.-ին ուս. տարվա I կիսամյակում իրականացրած աշխատանքերի վերաբերյալ:

Գրադարանի ընթերցասրահում տարվա ընթացքում կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ: 2023թ միջոցառումների թիվը կազմել է 18, որը 2022թ. համեմատությամբ աճել է 14%-ով:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ 2023 թվականին ընթերցողների թվաքանակը 2022 թվականի համեմատությամբ պակասել է 10%-ով, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի նվազումով:

Դասախոսական անձնակազմից գրադարանից օգտվողների թիվը մնացել է նույնը:

Գրքերը ուսանողներին տրամադրվում են գրադարանային գրքաշրջանառության սկզբունքով՝ անվճար:

Գրադարանում տեղի է ունեցել էներգետիկ ցիկլի դասախոսների ժողով - քննարկում, որտեղ էներգետիկ ցիկլի դասախոսներ Լ.Քամալյանը և Ս. Գյուրջինյանը ներկայացրել են իրենց կողմից գրված ուսումնական ձեռնարկները՝ «Այլընտրանքային էներգետիկա՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներ » և «Քարշային ցանցերի էլեկտրահաղորդման գծերի տեղակայում,շահագործում և վերանորոգում»:

Գրադարանային ֆոնդը համալրվել է նոր գրքերով՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ գեղարվեստական, որոնք հիմնականում ձեռք են բերվել նվիրատվությունների շնորհիվ: Միևնույն ժամանակ ձեռք են բերվել էլեկտրոնային մասնագիտական գրքեր:

3. 2023-2024թթ. ուս. տարվա I կիսամյակում կազմակերպված միջոցառումների վերաբերյալ:

Ուսխորհրդի նախաձեռնությամբ նշվել է « Ուսուցչի օրը » հոկտեմբերի 5-ին:Այդ օրը ուսխորհրդի նախաձեռնությամբ և ուսմասի համաձայնությամբ բոլոր կուրսերում 1-ին ժամին ուսանողները շնորհավերել են իրենց դասախոսնեին և տեղի է ունեցել բամավեճ՝ «Ուսուցիչ-աշակերտ» խորագրով:

2023 թվականի դեկտեմբերի 26-ին քոլեջում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Ամանորին:Քոլեջի շնորհալի ուսանողները իրենց երգ ու պարով,ասմունքով և հումորով հրաշալի բացահայտումներ կատարեցին բոլորի համար: Միջոցառումը շատ գեղեցիկ էր, հետաքրքիր և բովանդակալից:

«Հանրակրթական առարկայական հանձնաժողովի» կողմից կազմակերպվել է 4 միջոցառում, որոնցից 3 եղել է ռուսաց լեզվով, իսկ 1 անգլերեն:

« Բնագիտական առարկաներ և ինֆորմատիկա առարկայական հանձնա-ժողովի » կողմից անցկացվել է 4 դասընթաց՝ նվիրված էկոլոգիային:

«Տնտեսաիրավագիտական առարկայական հանձնաժողովի » դասախոսի կողմից կազմակերպվել է բաց դաս ՝«Բիզնես պլան» թեմայով, որտեղ ուսանողները ներկայացրել են իրենց կողմից գրված բիզնես պլանները:

4. Դասախոսների ներքին և արտաքին հոսունության տվյալների վերլուծություն

Քոլեջում կատարվել է դասախոսական կազմի շարժի հետ կապված աշխատանքների հստակեցում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ տվյալները.

Վերլուծելով դասախոսների ներքին և արտաքին հոսունության տվյալները, պարզ դարձավ, որ 2022 ուս.տարվա սեպտեմբեր ամսվա դրությամբ դասախոսական անձնակազմի թվաքանակը՝ 43 էր, որից 37-ը՝ հիմնական, 3-ը՝ համատեղությամբ, 3-ը՝ փոխարինող: Համեմատելով 2023 ուս.տարվա սեպտեմբեր ամսվա դրությամբ դասախոսական անձնակազմի թվաքանակի արդյունքները՝ պարզ է դարձել, որ գրանցվել է դասախոսական անձնակազմի հոսունություն, որի արդյունքում դիտարկվել է դասախոսական անձնակազմի նվազում 5% (42):

2022թ. հունիսի 12-ին համատեղությամբ աշխատող դասախոսների հետ պայմանագրերը լուծվել են:

2022թ. 3 փոխարինող դասախոսներից 2-ը դարձել են հիմնական աշխատողներ՝ 2023թ.-ին կազմակերպած մրցույթի արդյունքում:

2023թ.-ին դասախոսական անձնակազմը սեպտեմբերի 1-ի դրությամբ համալրվել է 10%-ով(4):

Նոր ընդունված դասախոսները մասնակցել են քոլեջի կողմից կազմակերպված մրցույթին և բավարարել են մրցույթի պահանջներին:

Քոլեջի դասախոսական անձնակազմը միշտ պատրաստակամ մասնակցում է բոլոր վերապատրաստումներին: 2023թ.-ին արտաքին վերապատրաստումներին մասնակցել է դասախոսական անձնակազմի 15%-ը(6): Քոլեջում 2023թ.-ին մայիսի 1-ից կազմակերպվում են

ներքին վերապատրաստումներ անգլերեն լեզվից, որը ենթարկվել է փոփոխության և կրում է շարունակական բնույթ:

Նախատեսվում է նաև 2024թ.-ին կազմակերպել ներքին վերապատրաստում Քաղաքացիական պաշտպանության անվտանգության կանոնների վերաբերյալ և կրակային դասընթացներ:

5. Ռազմավարական ծրագրում նշված աշխատանքների վերաբերյալ

Ռազմավարական ծրագրում նշված հիմնախնդիրներից, 2023թ.-ին առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Վերանորոգվել և վերազինվել են մասնագիտական կաբինետները
- Ստեղծվել է սլայդ լսարան
- Համալրվել է գրադարանային ֆոնդը մասնագիտական, գեղարվեստական և ժամանակակից գրականությամբ
- Կազմակերպվել են վերապատրաստումներ և դասընթացներ

6. Կրթության որակի ապահովման բաժնի աշխատանքների վերաբերյալ

ԱՊԷՔ-ի կրթության որակի ապահովման կենտրոնը իրականացնում է որակի ներքին ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով կրթության որակի բնագավառում քոլեջի ընտրած քաղաքականությամբ և կենտրոնի՝ 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանով: ՈԱ կենտրոնն իր առջև դրված աշխատանքներն իրականացրել է համապատասխան ժամկետներում, մի շարք գործընթացներ գտնվում են կատարման փուլում, նրանք իրենց բնույթով պարբերաբար իրականացվող են և կատարվում են՝ համաձայն ընթացիկ պահանջների: Կենտրոնը կարևորում է քոլեջում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների արդյունավետ իրականացումը և իր մշտական խորհրդատվությամբ աջակցում են բոլոր ենթակառուցվածքներին՝ ուղղորդելով նրանց գործընթացներն իրականացնելու որակի ապահովման շրջափուլով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), առաջնորդվելու համապատասխան քաղաքականություններով, կանոնակարգերով և ընթացակարգերով: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է տարբեր բնույթի բազում գործընթացներ՝ խորհրդատվություններ, փաստաթղթային հիմքերի համալրումներ և ներդրում, հարցումներ, վերլուծություններ:

ՈՍ կենտրոնը մշակել և հաստատմանն է ներկայացրել ԱՊԷՔ-ի բենչմարքինգի (համեմատական վերլուծության քաղաքականությունը, որը ներկայացնում է քոլեջում բենչմարքինգի անցկացման նպատակը, պլանավորման և իրականացման սկզբունքները: Այն քոլեջի գործունեության արդյունավետությանը և բարելավմանը միտված կարևոր քաղաքականություն է, որը կնպաստի քոլեջում լիարժեք խորհրդատվության ապահովմանը և աշխատանքների լիարժեք պլանավորմանն ու իրականցմանը:

Համաձայն բարելավման պլանի ՈԱ բաժինը քոլեջի դասախոսների համար օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով շարունակում է իրականացրել ներքին վերապատրաստումներ՝ անգլերեն լեզվի հետ կապված:

Քոլեջում որակի մշակույթը խթանելու, ՈԱ աշխատանքներն արդյունավետ իրականցնելու և ներքին շահակիցների շրջանակը ընդլայնելու համար ստեղծվել է ՈԱ ուսանողական խումբ:

Ըստ ՈԱ բաժինն աշխատանքային պլանի և ժամանակացույցի կենտրոնի կողմից իրականցվել է ուսանողական հարցում քոլեջում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ:Հարցումը իրականացվել է էլեկտրոնային տարբերակով, ստորև ներկայացված է հարցման վերլուծությունը:

2023թ. առաջին կիսամյակի Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման վերաբերյալ

Որակի կենտրոնի կողմից իրականացվել է ուսանողական հարցում քոլեջում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են 135 ուսանող: Արդյունքները ներկայացված են ստորև՝աղյուսակի տեսքով.

		1-5 բալանոց համակարգ				
		5	4	3	2	1
1	Դասախոսը ներկայացնու՞մ է դաընթացի կառուցվածքը, դասավանդման, ուսումնառության և գնահատաման եղանակները:(Պատ.135)	54.8%	29.6%	8.9%	3%	3.7%
2	Արդյո՞ք դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը: (Պատ.135)	54.8%	25.9%	12.6%	2.2%	4.4%
3	Արդյո՞ք նյութը մատուցվում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի: Օժանդակում է դասընթացի նյութը յուրացնելուն: (Պատ.135)	51.9%	28.1%	11.1%	3.7%	5.2%
4	Դասախոսը կիրառու՞մ է ինտերակտիվ մեթոդներ դասավանդման գործընթացում: (Պատ.135)	33.6%	30.6%	16.4%	11.9%	7.5%
5	Արդյո՞ք դասախոսը ուսանողներին հնարավորություն է տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով: (Պատ.135)	58.5 %	17.8%	14.1%	5.9%	3.7%
6	Դասախոսը խրախուսու՞մ է ուսանողների ինքնուրույն աշխատանքը:(Պատ.133)	51.1%	31.6%	8.3%	3.8%	5.3%
7	Դասախոսը օբեկտիվ է և ուսանողներին գնահատում է սահմանված չափանիշներով: (Պատ.135)	47.4%	21.5%	19.3%	6.7%	5.2%
8	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում վճարել եք գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.135)	Այո		Ոչ		
		0%		100%		
9	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել մասնավոր հիմունքներով պարապել՝գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.135)	Այո		Ոչ		
		9.8%		90.2%		
10	Լսարանում դասախոսը կարգապահությունը պահու՞մ է պատշաճ մակարդակի վրա: (Պատ.135)	43%	29.6%	16.3%	5.9%	5.2%
11	Դասախոսը բարիացակա՞մ է և հարգալից ուսանողների հանդեպ: (Պատ.135)	54.1%	22.2%	10.4%	6.7%	6.7%
12	Կցանկանայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի: (Պատ.135)	Այո		Ոչ		
		50.4%		49.6%		

Եզրակացություն

Այսպիսով ընդհանրացնելով ասվածը, կարելի է ասել, որ 2023-2024թթ. ընդունելության արդյունքում ուսանողների 78.1% նշել է, որ քոլեջի մասին տեղեկացել է շրջապատող անձանց միջոցով:Նոր ընդունված ուսանողների 57.8% մասնագիտության ընտրության հարցում որոշում կայացրել է ինքնուրույն: Քոլեջում կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող խորհրդատվությունը ուսանողների 45.8 %-ը գնահատել է գերազանց:

Ինչպես արդեն նշել ենք առարկայական հանձնաժողովները իրենց աշխատանքները իրականացնում են «ԱՊԷՔ-ի առարկայական հանձնաժողովների գործունեության կանոնակարգին » համապատասխան: Ըստ, որի յուրաքանչյուր առարկայական հանձնաժողով իրականացնում է թեմատիկ պլանների, դասալսումների գրաֆիկների հաստատում, դասավանդման մեթոդների ընտրության քննարկում և այլն: Դասալսումներն ունեն շարունակական բնույթ և դրանք խթանում են քոլջում ուսուցման մակարդակի բարձրացումը: Դասալսման արդյունքում վեր հանված խնդիրները քննարկվում են համապատասխան առարկայական հանձնաժողովներում և ստանում են իրենց լուծումները: Ինչպես նաև դասալսումները նպաստում են սկսնակ դասախոսներին ճիշտ պլանավորել և ավելի հմտորեն վարել դասը:

Կառավարման խորհրդի նեստերի արձանարությունների վերլուծությունների արդյունքներն հետևյալ են՝ կառավարման խորհրդի նիստերը տեղի են ունենում ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի, անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստ:: Տվյալ նիստի օրակարգի մասին նախապես տեղեկացվում են խորհրդի մյուս անդամները:Նիստի ներկա գտնվող յուրաքանչյուր անդամ արտահայտում է իր տեսակետը տվյալ հարցի և օրակարգի վերաբերյալ: Եվ յուրաքանյուր անդամի կարծիք կամ արված առաջարկ միշտ հաշվի են առնվում: Կառավարման խորհուրդը ապահովում է կայացրած որոշումների թափանցիկությունը, որոշումները ընդունվում են քննարկումների արդյունքում, կարծիքներ և առաջարկներ լսելուց հետո: Նիստում կայացրած որոշումների մասին տեղեկացվում են համապատասխան ստորաբաժանումնները:

Քոլեջում պրակտիկաները շարունակվում են կազմակերպվել պատշաճ կերպով՝ ըստ նախապես մշակված ժամանակացույցի: Արդյունքում ուսանողները կարողանում են ստացած տեսական գիտելիքներ գործնականում կիրառել և ավելի հստակ պատկերացում կազմել ընտրած մասնագիտության վերաբերյալ:

Քոլեջը շարունակում է բարելավել և նպաստավոր պայմաններ ստեղծել կրթության որակը բարձրացնելու համար: Այդ ուղղությամբ բազում աշխատանքներ են տարվել՝ համալրվել է գրադարանային ֆոնդ, վերանայվել են մանագիտական կրթական ծրագրերը, վերանորոգվել և մասամբ վերազինվել են մասնագիտական կաբինետները, ստեղծվել է սլայդ լսարան և այլն:

Դասախոսական անձնակազմի մասնագիտական որակները բարձրացնելու, գիտելիքները ընդլայնելու համար դասախոսները պարբերաբար մասնակցում են կազմակերպվող արտաքին վերապատրաստումներին: 2023թ. դասախոսական անձնակազմի 15% է մասնակցել արտաքին վերապատրաստումներին: Արտաքին վերապատրաստումներից բացի քոլեջը ՈԱ կենտրոնի առաջարկությամբ անցկացնում է նաև ներքին վերապատրաստումներ, որոնց մասնակցում է դասախոսների ընդհանուր թվի 35%-ը:

Կրթության որակի ապահովման կենտրոնը շարունակում է իրականացնել որակի ներքին ապահովման գործընթացն առաջնորդվելով որդեգրած քաղաքականությամբ: Կենտրոնը սերտ համագործակցում է քոլեջի բոլոր ստորաբաժանումների հետ, անհրաժեշտությամբ դեպքում տալով անհրաժեշտ խորհրդատվություն:Կենտրոնի կողմից իրականացված դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցմանը մասնակցել է ուսանողների ընդհանուր թվի 39% : Հարցման արդյունքները վերլուծվել և ներկայացվել են տնօրինությանը:

Կատարող՝ Մ. Խաչատրյան

Տնօրեն՝ Գ. Մեհրաբյան